ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/251

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.05.2022թ. թիվ 26/26-1/9873-2022 գրությամբ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 23.05.2022թ. թիվ 01/07/265-2022 գրության հիման վրա, 30.05.2022թ. թիվ 26/26-1/9873-2022 գրությամբ նախաձեռնել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/251 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2022թ. թիվ 01/07/265-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կարիքների համար 2022 թվականի մայիսի 4-ին ֆինանսական աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՆԱԿ-ԳՀԾՁԲ-07/22 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված միակ մասնագիտացված կառույցի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ի պաշտոնական կայքի http://aaaa.am/ «Ռեեստր» բաժնում՝ http://reestr.aaaa.am/:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիս 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետը՝ Ձեզ ենք ներկայացնում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, Մասնակցի կողմից ներկայացված հայտը, գրությունը և Ընկերության կողմից Մասնակցին ուղղված ծանուցումների լուսապատճենները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/251 ընթացակարգի շրջանակներում 22.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/251 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/251 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից ֆինանսական աուդիտի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԱԿ-ԳՀԾՁԲ-07/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված միակ կառույցի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ պաշտոնական կայքի http://aaaa.am «Ռեեստր» բաժնում http://reestr.aaaa.am և որոշում կայացրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

3. Սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 13.06.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/38 իրավապարտադիր որոշում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2022թ. թիվ 26/26-1/9873-2022 գրությունը, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի 23.05.2022թ. թիվ 01/07/265-2022 գրությունը և կից փաստաթղթերը, հաշվի առնելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 13.06.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/38 իրավապարտադիր որոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից ֆինանսական աուդիտի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԱԿ-ԳՀԾՁԲ-07/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արաձանագրել է, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված միակ կառույցի «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ պաշտոնական կայքի http://aaaa.am «Ռեեստր» բաժնում http://reestr.aaaa.am և որոշում կայացրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ սույն գործի փաստական հանգամանքների վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 13.06.2022թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/38 իրավապարտադիր որոշում, որի

համաձայն՝ պարտավորեցվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ ֆինանսական աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԱԿ-ԳՀԾՁԲ-06/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը, այն հիմնավորմամբ, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշման կայացումը հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն, որ սույն գործի փաստական հանգամանքի վերաբերյալ առկա է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված իրավապարտադիր որոշում, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.05.2022թ. թիվ 26/26-1/9873-2022 գրությամբ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**